

Գ. Ազնավուրյան

ՍԵՅՐՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սեյրին պատկանում է նախառևոյունդիոն շրջանի այն սերնդին, որոնք պայքարեցին սովետական կարգերի հաստատման համար և ընկան թշնամու գնդակից, չտեսնելով Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Սեյրին թողել է տպագիր և անտիպ գրական ժառանգություն, որն արժանի է հատուկ ուշադրության։

Սեյրին—Ավետիք Համբարձումի Գուլոյանը— ծնվել է 1878 թ. Իրանի Սալմաստ գավառի Հավթվան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում, որտեղ ուսուցչական պաշտոն էին կատարում այլ վայրերից աքսորված մտավորականները։

Իրեն խրախուսող ուսուցիչների օժանդակությամբ, Ավետիքը պատանի հասակում փախչում է Իրանից և ապաստան գտնում Թիֆլիսում։ Սակայն այնտեղ էլ բախտը չի ժպտում նրան, նա չի կարողանում ընդունվել Ներսիսյան դպրոցը, որին ամբողջ հոգով ձգտում էր։ Չունենալով ապրուստի տարրական միջոցներ, նա Թիֆլիսում աշխատանքի է ընդունվում որպես ծառայող՝ իր հայրենակից վաճառականներից մեկի մոտ։

Աշխատանքին զուգընթաց՝ նա զբաղվում է ինքնակրթությամբ և էքստերն քննություն է տալիս Ներսիսյան դպրոցում, ձեռք բերում ավարտական վկայական։ 900-ական թվականների սկզբներից նա սկսում է գրել հոգվածներ, արձակ գործեր, որոնք տպագրվում են ժամանակի պարբերական մամուլում՝ «Աշխատանք»-ում, «Ընկեր»-ում, «Մուրճ»-ում և այլ լրագրերում։ 1906 թ. «Ընկեր» պարբերականում Սեյրին գրում է մի շարք հետաքրքրական հոգվածներ, որոնց մեջ շոշափում է աշխատավորական խավերին հուզող հարցեր։

Ռուսական 1905 թ. ռևոլյուցիան իր ոլորտի մեջ է առնում նաև Սեյրին։ Այդ տեսակետից՝ ուշագրավ է 1906 թ. գրած «Ծռագ» ալլաբանական պատմվածքը, որը տպագրել է «Աշխատանք»-ում։

Այդ պատմվածքում հեղինակը կոչ է անում պայքարի դուրս գալ գյուղի դայլերի՝ շահագործողների դեմ։

Գործազուրկ մնալով, Սեյրին որոշում է գնալ Բաքու, որտեղ աշխատում է միառժամանակ։ Ապա՝ 1913 թ. անցնում է Իրան, զբաղվում մանկավարժական աշխատանքով, միառժամանակ ուսումնասիրելով տեղական կյանքը, որն իր արտացոլումն է գտնում նրա մի շարք նովելներում, արձակ բանաստեղծություններում։ Հետագայում նա նորից վերադառնում է Կովկաս, աշխատում և ստեղծագործում Բաքվում։

Սեյրին հրճվանքով և գրկալուսց ընդունում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և մտնում Գոմոլենիստական պարտիայի շարքերը։ 1920 թ. նա աշխատում է որպես Ադրբեջանի կենտրոնական և Բաքվի

կոմիտեներին օրգան «Կոմունիստ» թերթի պատասխանատու քարտուղար և ապա որպես խմբագիր, Հետագայում պարտիայի առաջադրանքով գործուղվում է Ղափան—Ջանգեզուր՝ կռվելու դաշնակցական բանդաների դեմ, նաեղել է կոմիսար, բանտարկվել է դաշնակցականների կողմից և ապա զընդակահարվել Ղափանում՝ 1920 թ. ամռանը:

* * *

Սեյրին իր գրական սկզբնավորությունը կատարել է ռուսական առաջին ռեուլյուցիայի տարիներին: Նա գրել է նովելներ, պատմվածքներ և արձակ բանաստեղծություններ, որոնց թիվը հասնում է մոտ 150-ի: Դրանց մեծ մասի նյութը վերցրած է աշխատավորության կյանքից:

1913 թ. Թիֆլիսում առանձին գրքով լույս է տեսնում նրա մի փոքրիկ ժողովածուն «Միլ ու ծաղիկ» խորագրով, որն արժանանում է ընթերցող հասարակության ջերմ գնահատականին:

Այդ նույն թվականին Սեյրին կազմում է մի նոր, ավելի ստվար ժողովածու «Անմոռունկ» վերնագրով և ներկայացնում է Կովկասի Հայոց հրատարակչական ընկերությանը ժողովածուի վրա կա ընկերության մականգրությունը՝ նրա հրատարակության մասին, սակայն մեղ անհայտ պատճառներով այն մնացել է անտիպ:

Թե՛ այդ ժողովածուն և թե՛ բաղմամբով այլ գործեր, հեղինակն իր կենդանությանը վերամշակել և պատրաստել է տպագրության, սակայն գրանք չեն հրատարակվել, և այժմ պահպանվում են Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի Գրականության ու արվեստի թանգարանում:

Սեյրին կատարել է թարգմանություններ Կորոլենկոյից, Կնուտ Համսունից և ուրիշներից:

Նրան ոգևորել է նաև Մ. Նալբանդյանի կերպարը, որին նվիրել է մի հեռաքրթիր նովել «Դառն խցիկում» վերնագրով:

Մեր նպատակը չէ խոսել Սեյրու ստեղծագործությունների մասին պոհասարակ, մենք ցանկանում ենք ծանոթացնել նրա երկու ստվարածալալ անտիպ վեպերը, որոնք պահպանվում են Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում, Սեյրու արխիվում և արժանի են ուշադրության:

Այդ վեպերից մեկը կոչվում է «Մլար», մյուսը՝ «Փշրանք»:

Սեյրին «Մլար»-ի նյութը վերցրել է Բաքվի աշխատավորության կյանքից: Բեպքերը կատարվում են Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի նախօրյակին:

Վեպն սկսվում է մի այլարանական պատկերով, Հեղինակը նկարագրում է մի մեծ քանդված շենք, որը պատկանում է մաքսանենգ առևտրական Պարապ Ապորը. վերջինս շենքի վարձով տալիս է դանազան մարդկանց և անխնա շահագործում նրանց: Այդ տունը մութք են գործել բաղմամբով պարադիտներ՝ օձեր, մողեսներ, կարիճներ, մակարույծ միջատներ, և այլն, որոնք հանգիստ չեն տալիս տեղի բնակիչներին: Այդ բոլորի վրա իշխում է խորամանկ, ճարպիկ սարդը, որը թագավորում է ամեն տեղ և իր ոստայնով ծածկում ամեն ինչ:

Այդ բնակարանում է ապրում նաև մի երիտասարդ բանվոր, որը պայքարում է թողոր տեսակի պարագիտների դեմ, գտնելով պայքարի տարրեր միջոցներ, նա պայքարում է, որպեսզի մարդիկ հանգիստ ապրեն:

Իրեն գիմոզներին նա ասում է. «ապրելու համար հենց կռիւ է հարկավոր»:

Վեպում հանդես է բերված Պարապ Ապոր որդին՝ Վազգենը, որը ընկնելով ունւյուցիոն ալիքի մեջ, պայքար է ծավալում շահագործողների ու ձրիակերների, այդ թւում, առաջին հերթին իր հոր դեմ, որը չի աշխատել, հող չի վարել, նաւթ չի քաշել, այլ միայն շահագործել է, գողացել, տեղն եկած ժամանակ էլ չկոճկավոր շանք աշխինքն դատաւորին կաշառք է տվել, իր գլուխը փրկելու համար: Վազգենը ըմբոստանում է և զոյվանքով երես է դարձնում հորից, գնում է ընկերների մոտ՝ պաշտպանելու բանվորների դատը: Կարճ ժամանակ անց՝ Պարապ Ապոր տունը վերցնում են նրա ձեռքից, հիմքից քանդելով, նրա տեղը կառուցում են նոր բնակարան, որտեղ ապրելու են աշխատավոր մարդիկ: Վազգենը մրտնոմ է Գոմոնիստական պարտիայի շարքերը, նա աշխատում է ամբողջ օրը, սովորեցնում է, պրոպագանդում ունւյուցիայի գաղափարները:

Վեպում պատկերված է նաև հարրեցող, ուրիշի աշխատանքով ապրող Կուղման: Նա դաժանորեն է վարվում իր որդու՝ Ֆեդկայի հետ, որն օգնում, խնամում, պաշտպանում է սոված կենդանիներին:

Զկարողանալով տանել հոր բոնությունները, անդկան գնում է նաւաստիների մոտ այն մտայնությամբ, որ նա այնտեղ կարող է ազնւորեն աշխատել և հաց վաստակել: Ռուս նաւաստիներ Վասիլին և Անտոնր կերակրում են նրան, ցույց են տալիս այն ճանապարհը, որը տանում է մարդկանց դեպի երջանիկ կյանքը: Այդ պատվաւոր ճանապարհը պայքարի և աշխատանքի ուղին է: Նաւաստի Վասիլին ասում է Ֆեդկային. «Յնցոտին պետք է կռւող դառնա և կռւի տարերքի ու թշնամու դեմ,— ա՛յ, էսպես դւարթ, պրծաւ ծեծդ, էլ ծեծ չկա, ծեծող չկա աշխարհի վրա: Բու այդ իմացիր: Կռւվենք տվել, արյուն թափել, որ ծեծը պրծնի. գիտես դու այդ՝ Որ, պետք լինի, մահով պիտի կռվենք ծեծողների դեմ: Նաւի տերն էլ հիմա մենք ենք լինելու»:

Ու աշխատի, նա կուտի, այս գաղափարն է պաշտպանում հեղինակը, որը նաւաստի Վասիլի բերնով ասում է. «Աստված բանվոր է դարձել, կտաւ է գործում, հիմա աշխարհում նա էլ պետք է բան անի, թե չէ սոված կմնա»:

Ամբողջ վեպի ընթացքում Սեյրին կենդանիների և մարդկանց օրինակով ցույց է տալիս, թե ինչպես ուժեղը հալածում, շահագործում, սպանում է թուլին, մինչև որ գալիս է ունւյուցիան և վերջ է տալիս այդ բանին:

Թանգարանում եղած մի քանի նամակներից երևում է, որ Սեյրին այս վեպն ուղարկել է «Պատանի ալմանախ»-ին տպելու, բայց չի հրատարակվել՝ մեզ անծանոթ պատճառներով:

Համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմը, հայկական ջարդերը Թյուրքիայում, ծանր կերպով անդրադառնում են Սեյրու վրա: Գաղթականություն, որրեր, սով, համաճարակ: Գովկասի մի խումբ հայեր, գաղթականների վիճակը բարելաւելու համար, միություններ, ընկերու-

թյուններ են ստեղծում: Հեղինակը տեսնում է, որ նման օգնութիւններով չի կարող փրկվել հայ ժողովուրդը և չի կարող լուծվել հայկական հարց: Նա գալիս է այն եզրակացութեան, որ ոչ միայն հայ, այլև Կովկասյան, Ասիական և նույնիսկ եվրոպական ժողովուրդների միակ փրկութիւնը կապված է ողու մեծ ժողովրդի հետ:

Ահա այս կարևոր հարցին է նվիրված Սեյրու ընդարձակ, հետաքրքրական, անտիպ մյուս վեպը՝ «Փշրանք»:

Վեպն ընդգրկում է 1914—1917 թ. ժամանակաշրջանը: Վեպում հանդես են բերված մի խումբ մտավորականներ, որոնք մամուլի, գասախոսութիւնների միջոցով աշխատում են հասարակութեան ուղղորդութիւնը հրավիրել ժողովրդի փիճակի վրա: Վեպի գլխավոր գեղեցիկ է Մարումյանը, — «Օրն թերթի խմբագիրը, որը հանդես է գալիս մամուլում խիստ հոգիածներով, կոչանելով օգնել գաղթականներին:

Մարումյանը գտնում է, որ գրականութիւնը, մամուլը և արվեստը պետք է ծառայեն իրական կյանքին, հասարակութեան շահերին: Նա խորացնում է հասարակութեան անտարրերութիւնը, սակայն հետևողական չէ, ինքն էլ ունենում է հուսահատութեան րոպէներ, չնայած սիրում է խոսել միևնույն կախաղան, միևնույն զնդանք, հայ ժողովրդին համատարիմ մնալու մասին:

Մարումյանը պատկանում է այն ինտելիգենտների թվին, որոնք՝ չըմբռնելով հասարակական կյանքի բարդ երևույթները, չգիտակցելով գասակարգային պայքարի անհրաժեշտութիւնը, կարծում են, թե հայ ժողովուրդը կարող է ազատագրվել լուսավորութեան ուղիով: Նա տիպիկ բուրժուական լուսավորիչ է:

Վեպում հանդես են բերված երիտասարդ, նոր մարդիկ, որոնք արդեն պաշտպանում են այլ գաղափարներ. նրանք հայ ժողովրդի բախտը սերտորեն կապված են տեսնում ողու ժողովրդի պայքարի հետ: Այդ երիտասարդներից է ուսանող Ավելյանը, որը գաստիարակվել է ողուական միջավայրում՝ Պետերբուրգում: Նա ծանոթ է սոցիալական գիտութիւններին, հասարակական կյանքին: Նա եկել է Կովկաս որոշակի նպատակով՝ երիտասարդութեանը ծանոթացնել ողուական կյանքի, ողուական իրականութեանը հուզող հարցերի հետ:

Ուշագրավ է տարրեր խավերի ներկայութեամբ նրա կարգացած գասախոսութիւնը, հասարակական քաղաքական կարևոր մի շարք հարցերի մասին: Ըստ Ավելյանի՝ Անդրկովկասի տնտեսական և կուլտուրական զարգացումը կապված է ողու մեծ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքի հետ, Ռուսաստանը մեծ դեր ունի կատարելու մարդկութեան պատմութեան մեջ, հին վարպետը նորից կթարթի աչքը, գործի կզնի իր ձեռքը և զատամած եվրոպան կգա սովորելու թարմ, երիտասարդ Ասիայից, ինչպիսի երբեմն Ասիան սովորում էր եվրոպայից: «Զուր չէ, որ Արևելքի ստրկութեան վրա հիմնված եվրոպական բարեկեցութիւնը տագնապի մեջ է ողուական հզորացման առաջ, արևելյան հսկաների արթնացման առաջ», ասում է հեղինակը:

Ավելյանը խիստ քննադատութեան է ենթարկում հայ ուսանողութեան այն հատվածին, որը թեև գտնվում է ողուական միջավայրում, բայց հանրային լուրջ գաստիարակութեան չունենալով, միևնույն վերջն էլ խորթ

է մնում ոռւս կյանքին, Ռուսաստանում կատարվող ուղեւորներին շարժումներին: Նա, օրինակ, քաջ գիտակցում է, որ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը կախված է Ռուսաստանում խմորվող ուղեւորներին շարժումներից, որ տարրեր ազգության պատկանող պրոլետարիատը միահամուռ ուժերով պետք է պայքարի ինքնակալության դեմ:

Սեյրին հանդես է գալիս նեղ ազգայնական գաղափարախոսության դեմ: Հայ բանվորի փրկությունը առաջին հերթին իր ոռւս և այլ ազգության պատկանող ընկերների հետ միանալու մեջ է: Ավելյանը խիստ քրննադատության է ենթարկում դաշնականներին, որոնք հրահրում են ազգամիջյան ատելություն ժողովուրդների միջև, պատճառ դառնում մասսայական կոտորածների:

Ավելյանը հավատացած է, որ Անդրկովկասի կապն անխզելի է Ռուսաստանի հետ, բայց իսկական, անրոնադատ կապը կզարգանա հենց այն ժամանակ, երբ չի լինի որևէ երկրի գերիշխանություն մյուս ժողովուրդների վրա և ամբողջ երկիրը առանձին-առանձին իր ազգային տնտեսական միություններով միացած կլինի մի ընդհանուր ֆեդերացիայի մեջ: Այդ դաշինքը կնքելու են այն դասակարգերը, որոնք շահ չունեն ազգային մեկուսացումից, թշնամությունից, որ զարգանում է ներկայումս մեր երկրում, արդի հասարակական տիրող ու ղեկավարող խմբակների միջոցով՝ ասում է Ավելյանը (էջ 204):

Ժողովականները, որոնք լսում են Ավելյանին, բաղկացած են տարրեր խավերից, ումանք հակառակ են նրա հայացքներին և աշխատում են իրենց տեսակետն առաջագրել. դահլիճում կան նաև Ավելյանի համախոհները և ջերմ պաշտպանները, որոնք որոշ թիվ են կազմում: Դրանցից են Մարտիկյանը, Զավադյանը, Նվարդը, տիկ. Նանայանը և ուրիշները: Մարտիկյանը ոգևորված Ավելյանի զեկուցումով, դահլիճով մեկ հայտարարում է. «Ձեռներս պարզած, ես կանչում եմ նրան (ուղեւորիան), գրկում. ողջունում եմ, թող գա»։ Սրանը ծափերից որոտում է ի նշան համաձայնության: Զավադյանը բացարձակ ասում է, որ մոտ ապագայում զարթնելու են մասսաները և այլևս տեղ չեն տալու դաշնակցականներին:

Ավելյանը գտնում է, որ հայ և թյուրք գյուղացին, բանվորը լավ կհասկանան միմյանց, հողը պետք է տիրեն նրանք, և իրենք էլ կառավարեն այն: Նա ասում է. «Իմ առաջնորդող միտքն այն է, որ կյանքը իրենց ձեռքն են առնելու շինող տարրերը, և դա շատ էլ հեռու չէ, ուրեմն և կյանքում ամեն ինչ պիտի փոխվի՝ համաձայն այդ տարրերի իրական շահի. իսկ նրանից հեռու մնացող ինտելիգենցիան չի կարող երբեք առաջնորդը լինել բանվորի համար» (էջ 226 – 227):

Ավելյանը որպես եզրակացություն, իր դասախոսության վերջում խիստ կերպով դատապարտելով դաշնականներին, ասում է, որ «կա միայն մի միսիթարություն, հանկարծահաս մի հեղեղ (ուղեւորիան) կգա, կսրբի և կտանի նրանց բոլորին հրապարակից, ինչպես ավգյան ախոռների աղբը» (էջ 223):

Ավելյանի գաղափարները պաշտպանում են Նվարդը, Նանայանը և ուրիշները, որոնք գտնում են, որ պայքարող ժողովուրդը վերջ ի վերջո հաղթանակելու է:

Ինչպես տեսնում ենք «Փշրանքներ» վեպն իր գաղափարական բովան-

դաւանութեամբ ուղարկուի է և կարենա: Գեղարվեստական կատարման տեսակետից նույնպէս վեպը հետաքրքրական է, չնայած այն չի հասցրած ավարտուն վիճակի:

Սեյրու արխիւում պահպանվում են մի շարք նյութեր, որոնք նա հավաքել է հայկական մեծ եղեռնի շրջանից, «Սով» վերնագրով մի նոր վեպ գրելու համար, կատարել է առանձին նշումներ, գրել է որոշ հատվածներ, սակայն նրա այդ և բազմաթիւ այլ մտահղացումները մնացել են անկատար, նրա վաղաժամ մահւման պատճառով:

Ինչպէս ասվեց, այս հոգվածի նպատակը չէ տալ Սեյրու ստեղծագործութեան բնութագիրը, այլ մեր գրականագետների ուղարկութիւնը հրավիրել գրեթե մոռացութեան մատնված մի տաղանդավոր արձակագրի անտիպ օրինակների վրա, որոնք արժանի են լուրջ ուղարկութեան և հրապարակութեան:

Լ. Բ. Ս. Տ. Ռ. Ի.

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ 1905—1907 ԹԹ. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 50-ԱՄՅԱԿԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի նիստերի զանգեմում սույն տարվա նոյեմբերի 18-ին և 19-ին տեղի ունեցավ Ակադեմիայի գիտական սեփան, նվիրված 1905—1907 թթ. ռուսական առաջին ռեւոլյուցիայի 50-ամյակին:

Սեփան բաց արեց ՀՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը, որից հետո կարգադրեցին հետևյալ զեկուցումները. «Ռեւոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», զեկուցող՝ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ազաւան, «Բոլշեւիկյան հայ մամուլը ռուսական առաջին ռեւոլյուցիայի տարիներին», զեկուցող՝ պատմական գիտ. թեկնածու Ե. Յալեյան, «Ռուսական առաջին ռեւոլյուցիայի ազդեցութիւնը Քյուրքիայի ռեւոլյուցիոն շարժումների վրա», զեկուցող՝ պատմ. գիտ. թեկնածու Ե. Սարգիսով, «Ռուսական առաջին ռեւոլյուցիան և հայ գրականութիւնը», զեկուցող՝ ֆիլոլ. գիտ. թեկնածու Ա. Ասատրյան, «Յարակալ գրաքննութիւնը և հայ մամուլը ռուսական առաջին ռեւոլյուցիայի տարիներին», զեկուցող՝ ֆիլոլ. գիտ. թեկնածու Ս. Արեշյան: